գեղը ոռոգելու։ Թորդում գաւառը վտակի ակունքի՝ հարաւի կողմից միացած է Կարինի եւ Բասենի գաւառներին, արեւմուտքից սրան սահմանաւորում են Հովտիկ եւ Սպերի գաւառները, հիւսիսից՝ Կիսկիմի եւ Պալիսարի գաւառները, իսկ արեւելքից՝ Օլթի գաւառը. սրանց մէջ ջրբաժան գիծը կազմում են Դաւրեա-Կուլկուլ, Ակասսա [1], Զիարէթ, Ազորդէն [2], Գուլի-Բագդադ [3], Ակ [1],

---

1 Ակասսա եւ Ակ վտակների անունները դարձեալ յիշեցնում են Ակկադեան ակ-վեհ, վսեմ բառը. որոնք սեպագիր թաթարները թրքացրել են եւ շարունակ բանացնում են — Ագ-բաբա, Ագ-բուլագ, Ագ-մեղրե, Ագ-քիլիսե, Ագ-ջա-կալա, Ագ-գոմ։ Ագ — սպիտակ, անբիծ նշանակութիւնն եւս ունի թաթարների լեզուով։

2 Ազորդէն աւերակները խիստ խորհրդաւոր են, անմատչելի, ինչպէս գեղը նոյնպէս եւ եայլան։ Ազորդէնը արդեօք ո՞ եւ է կապ չունի՞ Քալդէայի Ազազ քաղաքի հետ։

3 Գիւլի-Բագդադ ԼՀ. արդեօք Բագրատունիների Բագինի հետ կապ չունի՞, կամ Էլամի եւ Միջագետքի Բագդադների հետ ո՞ եւ է յարաբերութիւն չի՞ ունեցել։ Էլամի կամ բուն Պարսկաստանի թագաւորական տան անդամների շարքի մէջ Բագակերտ եւ Բագդադ նախանականները երեւում է, որ Բագրատունիների նման բագինների սպասաւորութիւնից առաջացած իշխաններ են։ Գիւլի-Բագդատը Սպերից հեռու, Թորդումի գաւառումն է։ Արդեօք Թորդումի մէջ եւս Կալուած եւ Բագիններ չե՞ն ունեցել այդ Բագրատները։ Գիւլի-Բագդատի Լ-ից ցած է գալիս, արեւմտեան լանջերից Խոս կամ Խոսոս առկը, որը նախ ոռոգում է Օթխա գեղը, որ ունի մեծ տաճար։ Այս տաճարը նոյնպէս հեթանոսականից փոխադրած է քրիստոնէականի։ Օթխան եւ Օշկը, Օձը, Օձունը, Օձիտը միեւնոյն արմատներն են, որոնք կապում են այս լեռնաշղթան Բագարատ իշխանական-քրմական տան հետ։ Իսկ Խոս վտակն ու գեղը դարձեալ իր նախապատմական բերդով՝ արդեօք չի՞ յիշեցնում Կիլիկեայի Խոսոը կամ Խոսը։